2023 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՍԵ՛Ք,
ԿԱՆԵ՛ՆՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ 4
ԹՎԱՅՆԱՑՈՒՄ 6
ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔՆԵՐ ԵՎ ԱՅԳԻՆԵՐ 7
ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ 10
ՕԴԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ 10
ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 12
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 15
ՀԱՍԱՆԵԼԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 17
ՀԱՍԱՆԵԼԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 18
ՍՊՈՐՏԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆԱՑՈՒՄ 19
ԵՐԵՎԱՆԸ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ 20
ՏՈՒՐԻԶՄԻ ԽԹԱՆՈՒՄ 22
ԹԱՓԱՌՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԽՆԱՄՔ 23
ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 24
ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ 25
ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 26
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ 27
ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ 28
ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍԵՐ 30

ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի՛ երևանցի, **«Քաղաքացիական պայմանագիր»** կուսակցության մոտեցումը Երևան քաղաքի զարգացման վերաբերյալ դու տեսել ես նախորդ հինգ տարիների ընթացքում: Քաղաքում առկա խնդիրները գոյացել էին տասնամյակների ընթացքում, և դրանց լուծումները պահանջում էին տարիների բարդ և թիմային աշխատանք: Այդ խնդիրների զգալի մասը մեր թիմը կարողացել է լուծել՝ բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգումից մինչև տրանսպորտային ռեֆորմ: Չնայած մեր կողմից ամենօրյա ներդրված եռանդին՝ դեռևս շարունակում են մնալ բազմաթիվ խնդիրներ, որոնք դեռ պետք է լուծումներ ստանան, և մեր թիմը ունակ է ապահովել Երևան քաղաքի զարգացման բնականոն ընթացքը: Մենք սահմանում ենք քաղաքի զարգացման առաջնահերթություններն իրենց լուծումներով և գործողություններով: Մեր համոզմունքն է, որ Երևանը պետք է լինի քաղաք՝ մարդկանց համար: Քաղաքն այդպիսին կարող է դառնալ հավատարիմ մնալով մի պարզ սկզբունքի՝ պահպանել հանրային շահի գերակայությունը անհատական շահի նկատմամբ: Հենց այս բանաձևով պետք է լուծենք բոլոր խնդիրները, իսկ մեր բոլորի հոգատարությունը քաղաքի նկատմամբ պետք է դառնա կենսակերպ: Երևանը պետք է համաչափ զարգանա: Յուրաքանչյուր վարչական շրջանի բնակիչ պետք է իր վարչական շրջանում ունենա ինքնադրսևորման, կրթության, բուժօգնության, սոցիալական ծառայությունների հասանելիության, մշակութային կյանքին մասնակցելու հավասար հնարավորություններ: Ձեր քվեն ստանալու դեպքում մենք պատրաստվում ենք զարգացնել մեր մայրաքաղաքը հենց ա՛յս սկզբունքներով:

Այժմ եկե՛ք վերհիշենք վերջին հինգ տարիների ընթացքում մեր թիմի կողմից կատարված աշխատանքները, ինչպես նաև Ձեզ ներկայացնենք առաջիկա հինգ տարիների մեր ծրագրերը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Հասարակական տրանսպորտը լավ չի գործում, մարդիկ կռացած են երթևեկում:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

- Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխումների շրջանակում 2023թ. օգոստոսի 15-ից, հավատարիմ մնալով մեր խոստմանը, երևանյան ներքաղաքային երթուղիներում այլևս չկան «հուսահատության» գազելներ:
- Այս պահին արդեն իսկ ձեռք ենք բերել միջազգային չափորոշիչներին համապատասխանող **578 ավտոբուս**, որից 548-ն արդեն իսկ շահագործվում է: Ձեռք ենք բերել նաև թվով **30 նոր** սերնդի, միջազգային չափորոշիչներին համապատասխանող **տրոլեյբուս**, որից 15-ն արդեն իսկ շահագործվում է Երևանի տրոլեյբուսային երթուղիներում և, շահագործվելով առանց ցանցին հպվելու, սպասարկում է Էրեբունու զանգվածը, Աէրացիան և Դավթաշեն վարչական շրջանը:
- Իրականացրել ենք նշանակալի բարեփոխումներ նաև Երևանի մետրոպոլիտենում, մասնավորապես կառուցել ենք դրենաժային թունելը և ամբողջությամբ փոխարինել մետրոպոլիտենի օդափոխության համակարգը:
- Ներկայում պիլոտային գործարկման փուլում է միասնական տոմսային համակարգը: Մինչև 2023թ. ավարտը կունենանք ներդրված միասնական տոմսային համակարգ վերգետնյա և ստորգետնյա հասարակական տրանսպորտի համար, կունենանք նաև միասնական տոմսի տարբեր տեսակներ: Համակարգը հնարավորություն կտա սահմանելու մեկանգամյա, շաբաթական, ամսական և եռամսյակային տոմսային բաժանորդագրության սակագներ, արտոնություններ կընձեռի սոցիալական տարբեր խմբերի, ինչպես նաև ֆիքսված ժամանակահատվածում տրանսպորտային միջոցների փոփոխման արդյունքում կբացառի կրկնակի գանձումը:
- Մեկնարկել ենք առանձնացված ավտոբուսային գծերի ներդրման գործընթացը՝ նպատակ ունենալով տրամադրել առաջնահերթություն և առավելություն հասարակական տրանսպորտին՝ երթևեկության մյուս մասնակիցների նկատմամբ:
- Ապահովել ենք Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի երթուղիների հասանելիությունը բջջային հավելվածների միջոցով, ինչը ընձեռում է ուղևորության էլեկտրոնային պլանավորման հնարավորություն և տրամադրում է հստակ տեղեկատվություն տրանսպորտի ժամանման վերաբերյալ:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

Մեր նպատակն է հանրային տրանսպորտի համակարգը դարձնել հասարակական կյանքի կազմակերպման կարևորագույն և արդյունավետ միջոց, որին հասնելու համար՝

- մշակելու ենք Երևան քաղաքի շրջանցիկ ճանապարհների կառուցման հայեցակարգը, որը հնարավորություն կտա բեռնաթափելու Երևան քաղաքի տրանսպորտային միջոցների հոսքերը,

- ներդնելու ենք նոր միասնական տրանսպորտային համակարգ՝ վերանայելով երթուղիները և, ըստ անհրաժեշտության, վերանայելու ենք նաև կանգառասրահների տեղադիրքերը,
- շարունակաբար արդիականացնելու ենք ավտոբուսների և տրոլեյբուսների շարժակազմերը՝ նախապատվություն տալով էլեկտրական և էկոլոգիապես մաքուր տրանսպորտի ձեռք բերմանը,
- ապահովելու ենք ավտոբուսների և մետրոյի չվացուցակի հասանելիությունը կանգառասրահներում, կայքի և բջջային հավելվածի միջոցով,
- փոխարինելու ենք գործող կանգառասրահները նոր «խելացի» լուծումներով վերազինված կանգառասրահներով, ինչպես նաև իրականացնելու ենք կանգառասրահների համալրում,
- ստեղծելու ենք մոնիթորինգային կենտրոն, միասնական տվյալների բազա և տրանսպորտային միջոցների հոսքերի կառավարման համակարգ, որոնք հնարավորություն կտան իրական ժամանակում համակարգված որոշումներ ընդունելու արտակարգ պատահարների վերաբերյալ, ինչպես նաև կառավարելու մեքենաների հոսքը՝ կրճատելով խցանումները,
- կառուցելու ենք ավտոբուսների կայանման և սպասարկման համար նախատեսված թվով 4 դեպո,
- շարունակելու ենք ավտոբուսների համար առանձնացված գծերի ներդրման գործընթացը,
- արդիականացնելու ենք հասարակական տրանսպորտի գործող երթուղիները՝ ավելացնելով դրանց սպասարկման ծածկույթը,
- շարունակելու ենք ապահովել հանրային տրանսպորտի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող և մանկասայլակով անձանց համար,
- շարունակելու ենք իրականացնել հանրային տրանսպորտի վարորդների վերապատրաստման գործընթացը՝ սահմանված ստանդարտների, վարվեցողության կանոնների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող ուղևորներին համապատասխան օժանդակություն ցուցաբերելու ընթացակարգերի ուղղությամբ: Վարորդներին ապահովելու ենք արտահագուստով՝ համաձայն սահմանված նորմերի,
- 2024թ. մեկնարկելու ենք և մինչև 2028թ. ավարտին ենք հասցնելու Աջափնյակի մետրոյի կայարանի կառուցումը**,**
- 2024թ. մեկնարկելու ենք և մինչև 2026թ. ավարտին ենք հասցնելու «Սուրմալու և «Փեթակ» առևտրի կենտրոնների հատվածում նոր կայարանի կառուցումը,
- 2027թ. ունենալու ենք դեպի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան տանող մետրոյի կայարանի կառուցման նախագիծ**,**
- մինչև 2027թ. ավարտելու ենք Երիտասարդական կայարանի երկրորդ մուտքի շինարարությունը, որը դուրս կգա Աբովյան-Սայաթ-Նովա խաչմերուկի հարակից տարածքում,
- հիմնելու ենք ճոպանուղային ցանց՝ Օղակաձև զբոսայգու 2-րդ հատվածից մինչև Նոր Նորքի 2-րդ զանգված և Աջափնյակ-Ծիծեռնակաբերդ-Պռոշյան ուղեգծերով,
- ներկերով իրականացված ճանապարհային գծանշումները փոխարինելու ենք մնայուն սառը կամ թերմո պլաստիկով:

ԹՎԱՅՆԱՑՈՒՄ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Քաղաքապետարանի «Մեկ պատուհանում» հերթեր են, դիմումները մնում են անպատասխան, հստակ չեն թույլտվությունների ստացման գործընթացները, նույն տեղեկատվությունը պահանջում են մի քանի անգամ, չեք գտնում գործընթացի պատասխանատուին և չգիտեք՝ ինչ անել, ի վերջո չկա միասնական հարթակ քաղաքապետարանի հետ փոխգործակցելու համար:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Քաղաքացուն որակյալ ծառայություն տրամադրելու համար նախ և առաջ անհրաժեշտ էր ապահովել ներքին գործառույթների թվայնացումը և կանոնակարգումը: Այս առումով Երևանի քաղաքապետարանում ներդրել և բարելավել ենք մի շարք համակարգեր, որոնք հնարավորություն են ընձեռել արդեն իսկ ակտիվացնելու որոշ էլեկտրոնային ծառայություններ՝ մասնավորապես.

- բարելավել և ընդլայնել ենք էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը (Mulberry) համակարգով և քաղաքացու կողմից դիմումի ընթացքին հետևելու ու պատասխանն առցանց ստանալու գործընթացը,
- ներդրել ենք ամպային տեխնոլոգիական միասնական միջավայր քաղաքապետարանի և ենթակա 460 կառույցների հաշվապահական համակարգերի համար,
- մինչև տարեվերջ ներդնելու ենք սպորտդպրոցների էլեկտրոնային կառավարման համակարգ,
- թարմացրել և օգտագործման համար առավել հարմարավետ ենք դարձրել Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքը (https://www.yerevan.am/hy/),
- ստեղծել ենք տեղական հարկերի և տուրքերի՝ մասնավորապես գույքահարկի և աղբահանության վճարի մասով առցանց եղանակով պարտքի ճշտման և վճարման հնարավորություն,
- ներդրել ենք թեժ գծերից քաղաքային խնդիրների վերաբերյալ ստացվող տեղեկատվությունը կատարողին ուղիղ փոխանցելու և վերահսկելու համակարգը,
- ներդրել ենք քաղաքացու հետ փոխգործակցության www.activecitizen.am հարթակը,
- վերացրել ենք թղթային տարբերակով զրոյական տեղեկանք ներկայացնելու անհրաժեշտությունը անշարժ և շարժական գույքի հետ կապված գործարքների ընթացքում:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

Երևան քաղաքի թվային փոխակերպումն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով միջազգային լավագույն փորձագետների հետ միասին մշակել ենք թվային փոխակերպման ռազմավարություն և գործողությունների հստակ ծրագիր, ըստ որի՝ առաջնահերթ ներդնելու ենք քաղաքացիներին ծառայությունների (ավելի քան 150) մատուցման միասնական հարթակ և մեքենայացված ուսուցման գործիքներով հագեցված հարմարավետ բջջային հավելված:
Ծառայությունները ներառելու են հարկեր/տուրքերի վճարումներից, բոլոր տեսակի թույլտվությունների ստացումից մինչև երեխայի՝ պարզեցված կարգով մանկապարտեզ հերթագրումը:

Թվային փոխակերպման ռազմավարության գործողությունների ծրագրով ներդրվող մյուս ուղղություններն են՝

- Թվային ենթակառուցվածքների զարգացում / Smart Environment,
- Կանաչ քաղաք / Green City,
- Անվտանգ քաղաք / Safe City,
- Շարժունակության զարգացում / Mobility,
- Խելացի կառավարում / Smart Governance:

Նշված ուղղություններով զարգացմանն ուղղված աշխատանքներն արդեն իսկ մեծ թափով սկսված են և կրելու են շարունակական բնույթ՝ հաշվի առնելով աշխարհում առկա ամենանորարար լուծումները:
Քաղաքային ծառայությունների որակի վերահսկման, միջադեպերին արագ արձագանքման և որոշումների ընդունման աջակցման նպատակով նախատեսվել է ստեղծել 24/7 ռեժիմով գործող քաղաքային միասնական կառավարման կենտրոն:

ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔՆԵՐ ԵՎ ԱՅԳԻՆԵՐ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Կանաչ տարածքները վերացել են, այգիները վերածվել են առևտրի կետերի:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

- Քաղաքի կանաչապատումը, կանաչ տարածքների պահպանությունը, խնամքը, մաքրումը, ոռոգումը, քաղաքային լանդշաֆտի պլանավորումը, մոնիթորինգն ու կանաչ գոտիների քարտեզագրումն առավել արդյունավետորեն իրականացնելու նպատակով հիմնել ենք «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը: ՀՈԱԿ-ը նաև իրականացնում է վերամշակման ենթակա կոշտ կենցաղային թափոնների ընդունում, հավաք, տեսակավորում, վերամշակում, ժամանակավոր պահեստավորում, հանձնում և վերաօգտագործում: Կազմակերպությունը պարբերաբար հագեցվում է անհրաժեշտ տեխնիկայով՝ իր առջև դրված խնդիրները լուծելու համար: Այս պահին ունենք 20 միավոր բեռնատար տեխնիկա, 3 միավոր ջրցան մեքենաներ, 20 միավոր բեռնաուղևորատար մեքենաներ և 3 բազմաֆունկցիոնալ մեքենա:
- Վերջին շրջանում Երևան քաղաքում կանաչ տարածքներն ավելացրել ենք շուրջ 33 հա-ով, այդ թվում՝ Ծիծեռնակաբերդ՝ 8.5 հա, Սարալանջ՝ 6 հա, Ավան վարչական շրջան՝ 1 հա՝ արդյունքում մեկ անձին բաժին ընկնող կանաչ տարածքների մինիմալ մակերեսը 7.7 քմ-ից հասցնելով 8 քմ-ի:
- Կանաչապատման ոլորտում, առաջնորդվելով միամյա ծաղիկները բազմամյա ծաղիկներով և ծաղկող թփերով փոխարինելու մոտեցմամբ, վերջին տարիներին սկսել ենք իրականացնել մեծ ծավալով թփապատման աշխատանքներ: Արձանագրենք նաև, որ վերջին տարիներին տնկվել են շուրջ 30 հազար ծառ և 425 հազար թուփ:
- Քաղաքում կանաչ տարածքներ ստեղծելու և պահպանելու նպատակով ի սկզբանե իրականացրել ենք ոռոգման ցանցի գույքագրման աշխատանքներ: Ըստ գույքագրման

արդյունքների՝ քաղաքային ոռոգման ցանցի մեծ մասը վատթար վիճակում էր: Այնուհետև առաջնահերթության կարգով վերականգնել և ընդլայնել ենք ոռոգման ցանցը: Ներկայումս ունենք շուրջ 25 կմ վերանորոգված և 35 կմ ընդլայնված ոռոգման ցանց:

- Ընդհանուր օգտագործման նոր կանաչ տարածքներ ստեղծելու և պահպանելու նպատակով կառուցել ենք թվով 2 խորքային հոր Շենգավիթ և Նոր Նորք վարչական շրջաններում:
- Իրականացրել ենք Երևանյան լճի ափամերձ տարածքի մաքրման և բարեկարգման աշխատանքներ՝ վերածելով տարածքը հանգստի գոտու: Ի շարունակություն այս ծրագրի՝ աղբի հոսքը դեպի Երևանյան լիճ կանխելու նպատակով Հրազդան գետի վրա տեղադրել ենք աղբաորսիչ սարք:
- Հրազդանի կիրճին բնապահպանական կարգավիճակ տալու նպատակով իրականացրել ենք նախնական ուսումնասիրություններ, իսկ տարածքի գույքագրման և քարտեզագրման աշխատանքների համար հայտարարվել է մրցույթ:
- Արդեն իսկ մեկնարկել են Գետառ գետի վրա կեղտաջրերի մաքրման կայան կառուցելու շինարարական աշխատանքները:
- Բարեկարգել և վերականգնել ենք Նոր Արաբկիր (Մալականի) այգին, որտեղ հիմնվել են նաև նոր ծաղկանոցներ, տնկվել ծառեր և թփեր, Օղակաձև զբոսայգին, Քանաքեռ ՀԷԿ-ի, Նոր Նորքի Սուրբ Սարգիս և Կենտրոն վարչական շրջանի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիների հարակից այգիները, Սարյան և Աբովյան պուրակները, Հայրենական պատերազմի հաղթանակի 40-ամյակին նվիրված զբոսայգին: Քանաքեռ-Զեյթուն, Շենգավիթ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում կարճ ժամանակահատվածում հիմնել ենք բոլորովին նոր և ժամանակակից այգիներ:
- Երևան քաղաքի բազմաթիվ այգիներում և պուրակներում (Օղակաձև զբոսայգի, «Մերգելյան» պուրակն ամբողջությամբ և այլն) իրականացրել ենք չգործող, լքյալ, հողի վարձակալության ժամկետը լրացած առևտրի և սպասարկման կրպակների ու տաղավարների ապամոնտաժման և մեկնարկել կանաչ տարածքի վերականգնման աշխատանքներ, որոնք շարունակական են լինելու բոլոր վարչական շրջաններում:
- Ներկայումս մեծածավալ աշխատանքներ ենք իրականացնում նաև Բուսաբանական այգու տարածքում անտառապուրակի կառուցման, Դավթաշեն 1-ին և 2-րդ թաղամասերի միջև գտնվող կենտրոնական այգու բարեկարգման ուղղությամբ:
- Իրականացրել ենք 5000 քմ կանաչապատ և կանաչապատման ենթակա տարածքների քարտեզագրման և գույքագրման աշխատանքներ:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

Կանաչ տարածքների բարելավման և ընդլայնման, մթնոլորտային օդի աղտոտման նվազեցման և հողերի էրոզիայի կանխման նպատակով առաջիկա երկարաժամկետ ծրագրերով որդեգրելու ենք գիտականորեն հիմնավորված հետևյալ քաղաքականությունը՝

- հաշվի առնելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության չափորոշիչները, որոնց համաձայն՝ մեկ անձին ընկնող կանաչ տարածքների նվազագույն մակերեսը 9 քմ է, առաջիկա 5 տարիների ընթացքում Երևանի կանաչ տարածքներն ավելացնելու ենք՝ հասնելով և անցնելով նվազագույն շեմը,
- առաջիկա հինգ տարիների ընթացքում Դալմայի այգիներում առկա 200 հա-ից ավելի տարածքում հիմնելու ենք նոր քաղաքային այգի՝ բացառելով որևէ կառուցապատում այդ տարածքում,

- առաջիկա 5 տարիների ընթացքում Նորքի նախկին այգիներում առկա շուրջ 10 հա տարածքում տնկելու ենք անտառ՝ ստեղծելով բուֆերային գոտի և մասնակիորեն վերականգնելով այդ տարածքի կանաչապատ հատվածը,
- վերականգնելու ենք «Փարոսի» անտառտնկարկը՝ որպես ամբողջական էկոհամակարգ,
- Հրազդան գետի վրա տեղադրելու ենք ևս երկու աղբաորսիչ սարք, որոնց նախագծումն ընթացքի մեջ է,
- կառուցապատումների պարագայում շինթույլտվությունների պարտադիր պայման ենք սահմանելու կանաչ տարածքների և խաղահրապարակի առկայությունը՝ սահմանված նորմերին համապատասխան,
- առաջիկա 5 տարիների ընթացքում վերականգնելու և արդիականացնելու ենք Երևանի ոռոգման համակարգի կեսից ավելին՝ շուրջ 120 կմ նոր ցանցի անցկացմամբ: Երկարաժամկետ հեռանկարում արդիականացնելու և հնարավորինս ավտոմատացնելու ենք ոռոգման ամբողջ ցանցը՝ այն հասցնելով շուրջ 500 կմ-ի,
- մեկ միասնական GIS (աշխարհագրական տեղեկատվական համակարգ) համակարգում ամփոփելու ենք Երևանի բոլոր վարչական շրջաններում առկա ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների վերաբերյալ տվյալները: Այսպիսով, Երևանում կունենանք ամբողջական պատկեր առկա կանաչ տարածքների, դրանց տեղադիրքի, ոռոգման համակարգի և հարակից ենթակառուցվածքների վերաբերյալ: Բոլոր աշխատանքներն իրականացնելու ենք բարձր ճշգրտության մասնագիտական սարքավորումներով, որոնք կապահովեն տվյալների ամբողջականությունը,
- 2023թ. մեկնարկած՝ ծառերի անձնագրավորման գործընթացը առաջիկայում հասցնելու ենք ավարտին,
- առաջիկա 5 տարիներին արդիականացնելու ենք ջերմոցատնկարանային տնտեսությունը՝ կառուցելով նոր ջերմատուն, արտադրական ծավալներն ավելացնելու ենք՝ հասցնելով տարեկան շուրջ 10.000 ծառի, շուրջ 1 մլն թփի ու ծաղկի: Այդպիսով ապահովելու ենք Երևանի կանաչ տարածքներում պահանջվող բուսազանգվածի հիմնական մասը,
- եղած կանաչ տնկարկներում առկա կենսունակությունը կորցրած կամ դրա ավարտին մոտ գտնվող ծառերը փոխարինելու ենք բնապահպանական առումով արժեքավոր, գեղազարդ տեսակներով,
- ընտրելու ենք կայուն, գեղազարդ և Երևանի բուսաբանական կազմին հարիր ծառատեսակներ՝ հաշվի առնելով դրանց տնկման տարածքի միկրոկլիման և բնակլիմայական պայմաններն ու առանձնահատկությունները աղմուկի, գազերի, փոշու և այլ աղտոտիչների նկատմամբ,
- իրականացնելու ենք բակային տարածքների բուսազանգվածի երիտասարդացում և լրացում,
- ավելացնելու ենք կանաչ ցանկապատերը և թփերը, կիրառելու ենք ուղղաձիգ կանաչապատման մոտեցումները:

ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Երեխաները խաղալու տեղ չունեն, բակերը զավթված են ավտոտնակներով:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Բնակիչների համար առավել հարմարավետ պայմաններ, իսկ երեխաների համար խաղալու բարենպաստ միջավայր ստեղծելու նպատակով վերջին հինգ տարիների ընթացքում մեծաթիվ աշխատանքներ ենք իրականացրել Երևանի բոլոր վարչական շրջաններում՝ բակային տարածքների և խաղահրապարակների կառուցման և հիմնանորոգման ուղղությամբ: Մասնավորապես՝

- վերակառուցել և հիմնանորոգել ենք թվով 315 բակային տարածք, որոնք իրենց մեջ ներառում են մարզասարքեր, խաղասարքեր՝ ռետինե պաշտպանիչ հատակով, զրուցարաններ, լուսավորության արդիականացում,
- կառուցել և հիմնանորոգել ենք թվով 68 ֆուտբոլի, 7 բասկետբոլի, 6 վոլեյբոլի, 4 թենիսի խաղադաշտեր:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

- Կառուցելու և հիմնանորոգելու ենք Երևանի բոլոր բակերն իրենց ենթակառուցվածքներով:

ՕԴԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Քաղաքը փոշու մեջ կորած է, օդի որակը լավը չէ:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Քաղաքում ստեղծված իրավիճակը շտկելու ուղղությամբ վերջին տարիներին իրականացրել ենք բազմաթիվ աշխատանքներ.

- մասնավորապես՝ օդի որակի մշտադիտարկման նպատակով ձեռք ենք բերել հինգ սենսորային սարք, որոնց շնորհիվ արդեն մեկ տարի է, ինչ իրականացվում է ակտիվ և արդյունավետ վերահսկողություն օդի որակի կանոնների պահպանման ուղղությամբ,

- վերականգնվող էներգետիկայի բնագավառի ձեռքբերումներից է Երևանյան լճի վրա կառուցված՝ տարածաշրջանում նախադեպը չունեցող լողացող արևային կայանի կառուցումը, ունենք 97 բազմաբնակարան շենք, որոնց արդիականացված բակային և ներշենքային լուսավորությունը նույնպես ապահովվում է արևային էներգիայով,
- կարևորելով համայնքային ենթակայության կազմակերպություններում, այդ թվում՝ մանկապարտեզներում, մարզադպրոցներում, մանկապատանեկան կենտրոններում էներգաարդյունավետության և հարմարավետության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ դեռևս շինարարության նախագծման փուլում շեշտադրում ենք շենքերի ջերմամեկուսացման, արևային վահանակներով, ջրատաքացուցիչներով վերազինման կարևորությունը: Այս պահին ունենք էներգաարդյունավետ տարրերով հիմնանորոգված և վերանորոգված շուրջ 45 մանկապարտեզ, ևս 6 մանկապարտեզների տանիքներ ամբողջությամբ վերակառուցվել և ջերմամեկուսացվել են, իսկ մինչև տարեվերջ կունենանք ևս 35 մանկապարտեզ, որոնց տանիքներին տեղադրված կլինեն արևային ֆոտովոլտային վահանակներ և ջրատաքացուցիչներ,
- տրանսպորտային բարեփոխումների շրջանակում շարժակազմը համալրելիս ձեռք ենք բերել միջազգային չափորոշիչներին համապատասխանող տրոլեյբուսներ և սեղմված բնական գազով շահագործվող ավտոբուսներ: Տրանսպորտային միջոցների քանակը կրճատելով մոտ 2.3 անգամ և դրանք փոխարինելով մեծ տեղատարողությամբ շարժակազմով, ինչպես նաև ընդհանուր ցանցի երկարությունը կրճատելով մոտ 3.5 անգամ՝ նպատակ ենք հետապնդում բեռնաթափել կենտրոնական փողոցները, բարձրացնել քաղաքացիների հարմարավետության մակարդակը՝ էականորեն կրճատելով ջերմոցային գազերի արտանետումները, ինչը կազմում է էներգետիկ դաշտի արտանետումների բաղկացուցիչ մասը:

Իրականացված այս բոլոր միջոցառումները մեծապես նպաստել են մթնոլորտում ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը, սակայն գալիք տարիներին նախատեսում ենք կրկնապատկել մեր գործողությունները՝ քաղաքում կյանքի որակը բարձրացնելու և ժամանակակից չափանիշներին հասցնելու նպատակով:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

- Ավելի ընդգրկուն տվյալներ ձեռք բերելու և իրավիճակին ճիշտ արձագանքելու նպատակով մինչև 2024թ. ավարտը բոլոր վարչական շրջաններում տեղադրելու ենք օդի որակի մոնիթորինգի երեքական սենսորային սարք:
- Կառուցելու ենք շրջանցող ճանապարհներ, էստակադներ, ներդնելու ենք երթևեկության թվային կառավարման համակարգ և խելացի լուսացույցներ:
- Արևային ֆոտովոլտային վահանակների, ջրատաքացուցիչների կիրառմամբ վերակառուցելու և հիմնանորոգելու ենք թվով 32 մանկապարտեզ և 6 պոլիկլինիկա:
- Էլեկտրամոբիլների առանձնացված ավտոկայանատեղիների սահմանմանը և լիցքավորման կայանների տեղադրման տեխնիկական և իրավական հիմքերի մշակմանը զուգահեռ՝ սահմանելու ենք էլեկտրամոբիլների լիցքավորման կետերի կառուցման պարտադիր պահանջ՝ նորակառույց շենքերի շինթույլտվությունների տրամադրման համար:
- Մշակելու և իրագործելու ենք հեծանվային և էլեկտրական ինքնագլորների ցանցի կանոնակարգման ռազմավարությունը և գործողությունների պլանը:

- Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից էլեկտրամոբիլների ներկրման հարկային արտոնություններ տրամադրելու քաղաքականությունն էլ ավելի արդյունավետ դարձնելու և խթանելու համար սահմանելու ենք էլեկտրամոբիլների առանձնացված ավտոկայանատեղիներ, ինչպես նաև մշակելու ենք լիցքավորման կայանների տեղադրման տեխնիկական և իրավական հիմքերը:
- Մշակելու ենք Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների ծրագիր, որի իրականացմամբ քաղաքը կկատարի իր առջև դրված հանձնառությունը և մինչև 2030 թվականը 30%-ով կկրճատի CO2-ի արտանետումները:
- Միջազգային առաջատար փորձի վրա հիմնվելով՝ ուսումնասիրելու ենք շենք-շինությունների ճակատային հատվածի մշակման արդյունքում հատուկ ներկերով պատելու եղանակով մթնոլորտում առկա արտանետումների կլանման հնարավորությունը:
- Շրջակա միջավայրին առնչվող տեղեկատվական հասանելիություն ապահովելու նպատակով ստեղծելու ենք «Կանաչ զարգացում» տեղեկատվական հարթակը:

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Վերելակներն անսարք են և վթարային:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Երևան քաղաքում առկա փոխարինման ենթակա թվով 4239 վերելակներից 2023թ. ավարտին փոխարինված կլինի վթարային վիճակում գտնվող շուրջ 1600 վերելակ: Նոր տեղադրվող վերելակները համապատասխանում են միջազգային չափանիշներին, էներգախնայող են և հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց համար:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

Առաջիկա հինգ տարիների ընթացքում, ըստ առաջնահերթության, փոխարինելու ենք վթարային վիճակում գտնվող **մնացած բոլոր 2639 վերելակները:**

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Քաղաքն աղբի մեջ կորած է:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

- Քաղաքային աղբահանությունը և սանիտարական մաքրումը կանոնակարգելու նպատակով ստեղծել ենք «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում»

համայնքային հիմնարկը, որը տեխնիկապես հագեցված է 57 աղբատար մեքենաներով, 30 բազմաֆունկցիոնալ մեքենաներով և մասնագիտացված այլ տեխնիկայով:

- Ձեռք ենք բերել շուրջ 15.000 կենցաղային թափոնների կոնտեյներներ:
- Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքներում սանիտարական վիճակն ապահովելու, ինչպես նաև աղբահանությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով փակել ենք բոլոր բազմաբնակարան շենքերի աղբամուղները:
- Կանգառասրահների կահավորման համար ձեռք ենք բերել շուրջ 1000 աղբամաններ:
- Փողոցների երթևեկելի հատվածների բեռնաթափման և սանիտարական վիճակը պատշաճ ապահովելու նպատակով կառուցել ենք կենցաղային թափոնների կոնտեյներների համար նախատեսված 733 հարթակ, իսկ մինչև տարեվերջ կառուցելու ենք ևս 260-ը:
- Քաղաքի 140 տարբեր հասցեներում տեղադրել ենք աղբի տեսակավորման 420 թափոնաման, ձեռք ենք բերել ևս 930 թափոնաման, որոնք կտեղադրվեն մինչև տարեվերջ:
- Իրականացրել ենք Երևանյան լճի ափամերձ տարածքի մաքրման աշխատանքներ: Արդյունքում տարածքից հեռացվել է շուրջ 9500 խմ աղբ: Մեկնարկել ենք նաև Հրազդան գետի և ափամերձ տարածքի մաքրման աշխատանքները:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

- Շարունակաբար բարելավելու ենք աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակը:
- Կառուցելու ենք կենցաղային թափոնների քաղաքային նոր աղբավայր: Կոնսերվացնելու ենք գործող աղբավայրը և ստեղծելու ենք կոշտ կենցաղային թափոնների վերամշակման ենթակառուցվածք:
- Թափոնների տեսակավորման ոլորտում առաջիկա հինգ տարում տեսակավորման կետերն ավելացնելու ենք՝ 140-ից հասցնելով առնվազն 300-ի, ավելացնելու ենք վերամշակելի թափոնների տեսակը՝ ներառելով այլումինե թափոնների համար նախատեսված տարաները, աղբի տեսակավորման թափոնամանների թիվը հասցնելու ենք 3000-ի:
- Դպրոցները համալրելու ենք տեսակավորման համար նախատեսված թափոնամաններով:
- Իրականացնելու ենք իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ աղբի տեսակավորման մշակույթը կենցաղում ներդնելու ուղղությամբ:
- Կարգավորելու ենք շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և տեղադրման գործընթացը, սահմանելու ենք համապատասխան վայրերում աղբի տեղափոխման և տեղադրման կարգերն ու կանոնները:

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Կոմունալ ենթակառուցվածքները հնամաշ են:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

- Իրականացրել ենք նոր կոյուղատար և հեղեղատար համակարգերի կառուցման, վերակառուցման և արդիականացման աշխատանքներ՝ շուրջ 19.000 գծամետր:

- Մեկնարկել և մինչև տարեվերջ ամբողջությամբ ավարտին ենք հասցնելու կոյուղատար ցանցի արդիականացման վերակառուցման և նոր ցանցի ստեղծման աշխատանքների ծրագիրը մայրաքաղաքի 36 հասցեներում՝ շուրջ 15 կմ երկարությամբ: Ավարտին ենք հասցնելու Երեբունի վարչական շրջանի Մուշական թաղամասի նոր կոյուղատար համակարգի կառուցումը:
- Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ Արաբկիր, Երեբունի և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում իրականացվում է ջրամատակարարման գործող ցանցի վերակառուցման և անհատական տնային միացումների ծրագիրը՝ շուրջ 9 կմ երկարությամբ, որը նախատեսված է 1720 բաժանորդի համար:
- Մինչև տարեվերջ ավարտին ենք հասցնելու նաև ընթացող շուրջ 40 կմ երկարությամբ, այդ թվում՝ Շենգավիթ վարչական շրջանի Նոր Խարբերդ թաղամասի գազատարի կառուցումը:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

- Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ առաջնահերթության կարգով իրականացվելու է Հաղթանակ, Սիլիկյան և Նոր Խարբերդ թաղամասերի ջրամատակարարման ցանցի արդիականացման և անհատական տնային միացումների ծրագիրը՝ 167 կմ երկարությամբ, նախատեսված շուրջ 7200 բաժանորդի համար:
- Երևան քաղաքի ջրահեռացման համակարգի արդիականացման ծրագրի շրջանակներում առաջնահերթության կարգով նախաձեռնելու և մեկնարկելու ենք չկոյուղացված թաղամասերի և փողոցների կոյուղու կառուցման աշխատանքները՝ մայրաքաղաքի 83 հասցեներում, շուրջ 90 կմ երկարությամբ, 12300 բաժանորդի համար:
- Շարունակաբար իրականացնելու ենք շուրջ 350 հասցեներում 70 կմ երկարություն ունեցող խնդրահարույց կոյուղագծերի վերակառուցման, իսկ 39 հասցեներում 14 կմ երկարություն ունեցող կոյուղագծերի նորոգման աշխատանքներ:
- Տարբեր վարչական շրջաններում նախաձեռնելու ենք գազամատակարարման մագիստրալ և բաշխիչ արտաքաղաքային և ներքաղաքային նոր ցանցի կառուցում՝ հաշվի առնելով Երևան քաղաքում բնակելի և հասարակական կառուցապատման աճող ծավալներով պայմանավորված գազի սպառման պահանջարկի կտրուկ ավելացումը:
- Նախաձեռնելու և մինչև 2025 թվականն ավարտին ենք հասցնելու բազմաբնակարան շենքերի կառավարման (համատիրությունների) մասին նոր օրենքի ընդունումը և կառավարման արդյունավետ մոդելի ներդնումը:
- Շարունակելու ենք հարթ և թեք տանիքների ու շքամուտքերի վերանորոգման ծրագիրը:
- Իրականացնելու ենք Երևանյան լճի խորքային ջրհեռի փականային հանգույցի և մակերևութային ջրթողի վերակառուցման և վերազինման աշխատանքները:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Մեր սոցիալական խնդիրներին գրագետ արձագանքելու համար համապատասխան մասնագետ չկա, գործ չկա, տարեցներն անտեսված են:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

- Երևան համայնքի շուրջ 60 աշխատակիցների համար կազմակերպել ենք «Սոցիալական աշխատանք» մասնագիտական հատուկ ուսուցման երկամսյա դասընթաց: Քննությունները հաջողությամբ հանձնած մասնակիցները նշանակվել են համապատասխան պաշտոնների:
- Ավելացրել ենք սոցիալական աշխատողների քանակը: Մինչև 2018 թվականը համայնքն ունեցել է մեկ սոցիալական աշխատող, իսկ 2021 թվականից համայնքը ունի շուրջ 54 սոցիալական աշխատող և 14 հոգեբան:
- Երևանի քաղաքապետին կից սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի շրջանակներում քննարկել և ֆինանսավորել ենք վարչական շրջանների կողմից ներկայացված շուրջ 25 ծրագիր, այդ թվում՝ ուսման վարձի փոխհատուցում, առաջնային անհրաժեշտության կենցաղային պայմանների ապահովում, դրամական աջակցություն, տրամադրել ենք նաև հասցեական աջակցություն տարբեր ուղղություններով (բնաիրային աջակցություն, հագուստ, կենցաղային տեխնիկա, բնակարանային պայմանների բարելավում և այլն): Կարող ենք փաստել, որ վերջին չորս տարիների ընթացքում աջակցություն ստացած ընտանիքների թիվը 74 875 է:
- Համագործակցելով տարբեր կազմակերպությունների հետ՝ առաջնահերթությունը տվել ենք զբաղվածության ծրագրերի իրականացմանը: Արդյունքում վերոնշյալ ընտանիքների աշխատունակ անձինք հնարավորություն են ունեցել ձեռք բերելու նոր մասնագիտություն, աշխատանքային գործիքներ, աջակցություն աշխատանք գտնելու, ինչպես նաև սեփական բիզնես հիմնելու հարցում:

Պատերազմից տուժած ընտանիքներին ուղղված սոցիալական ծրագրերի իրականացման շրջանակներում, համագործակցելով համայնքում գործող տարբեր կազմակերպությունների հետ, իրականացվել են հետևյալ սոցիալական ծրագրերը՝

- կենցաղային պայմանների բարելավման նպատակով հենաշարժողական խնդիրներ ունեցող մի շարք զինծառայողների բնակարաններում իրականացրել ենք վերանորոգման-հարմարեցման աշխատանքներ՝ թեքահարթակների կառուցում, սանհանգույցի հարմարեցում, աստիճանավանդակի կառուցում՝ վերջիններիս բնականոն կյանք ինտեգրելու նպատակով,
- ըստ անհրաժեշտության՝ ապահովել ենք հոգեբանական, հոգեբուժական ծառայությունների տրամադրում,
- պատերազմում զոհված զինծառայողների ընտանիքների շուրջ 28 անդամներ վերապատրաստվել են որպես հոգեբան հավասար խորհրդատուներ, ովքեր վարչական շրջանների սոցիալական աշխատողների և հոգեբանների հետ համատեղ հոգեբանական աջակցություն են ցուցաբերում պատերազմ վերապրած և պատերազմից տուժած ընտանիքներին:

Երևան համայնքը, մշտապես կարևորելով տարեցներին ուղղված համայնքահեն ծառայությունների մատուցումը, իրենց իսկ հարմար կեցության պայմաններում պահելու առաջնահերթությունը, համագործակցելով տարբեր կազմակերպությունների հետ, իրականացրել է սոցիալական ծրագրեր, աջակցելով՝

- տնային և ցերեկային խնամքի շուրջ 560 շահառուի,
- տաք ճաշի տրամադրման ծառայությունների մատուցման հարցում շուրջ 800 շահառուի,
- ինչպես նաև մեծ ուշադրություն է դարձվել հմտությունների պահպանմանը և զարգացմանը, ազատ ժամանցի կազմակերպմանն ուղղված ծրագրերի իրականացմանը՝ աջակցելով Հայաստանի Հանրապետությունում տարբեր տեսարժան վայրեր 200 տարեցների մասնակցությամբ թվով 60 շրջագայությունների կազմակերպմանը:

Տարեցներին ուղղված սոցիալական ծրագրերի իրականացմամբ նպատակ ունենք նրանց համար ապահովել արժանապատիվ և առողջ ծերություն:

Տրամադրել ենք հասցեական աջակցություն հետևյալ ուղղություններով՝

- բնաիրային աջակցություն, մասնավորապես՝ հագուստ, կենցաղային տեխնիկա, առաջնային անհրաժեշտության գույք՝ 2020թ.՝ 42900 ընտանիք, 2021թ.՝ 21270 ընտանիք, 2022թ.՝ 9193 ընտանիք, որից 287 ընտանիքի տրամադրվել է գույք և կենցաղային տեխնիկա, շուրջ 50 բնակարաններում իրականացրել ենք կենցաղային պայմանների բարելավմանն ու հարմարեցմանն ուղղված աշխատանքներ, 2023թ.՝ մինչև այս պահը, 2741 ընտանիք:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

- Սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակներում շարունակելու ենք իրականացնել կյանքի որակի բարելավմանն ուղղված սոցիալական ծրագրեր խոցելի խմբերի համար (բազմազավակ ընտանիքներ, հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցներ, երեխաներ, պատերազմից տուժած ընտանիքներ, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներ):
- Երևան քաղաքում սոցիալական պաշտպանության համակարգի արդյունավետ կառավարման և սոցիալական պլանավորման նպատակով ստեղծելու ենք թվային տեղեկատվական բազա, ինչը հնարավորություն կտա յուրաքանչյուր ընտանիքի վերաբերյալ ստանալու համալիր տեղեկատվություն՝ կարիքների, իրականացված աշխատանքների և անհրաժեշտ աջակցության վերաբերյալ:
- Իրականացնելու ենք առցանց սուրդոթարգմանության ծրագրեր, ինչը հնարավորություն կտա լսողության և խոսքի խանգարումներ ունեցող անձանց ինքնուրույն լուծելու իրենց խնդիրները:
- Հիմնելու ենք համայնքային նոր սոցիալական ծառայություններ՝ արագ արձագանքման կարիք ունեցող խոցելի խմբերին անհրաժեշտ ծառայությունների մատուցումը կազմակերպելու նպատակով:

ՀԱՍԱՆԵԼԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Մանկապարտեզների շենքային պայմանները անմխիթար են, իսկ հերթերն՝ անվերջ:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

- Վերակառուցել և հիմնանորոգել ենք թվով **53 մանկապարտեզ (որից 24-ը՝ 2023 թ.-ին), որի արդյունքում** 9400 երեխայի համար բարելավվել է կրթադաստիարակչական միջավայրը՝ միաժամանակ հնարավոր դարձնելով հավելյալ շուրջ 750 երեխայի հաճախումը մանկապարտեզ: Հիմնել ենք մեկ նոր մանկապարտեզ Նուբարաշեն վարչական շրջանում:
- Բոլոր այս մանկապարտեզները համալրվել են ժամանակակից չափորոշիչներին համապատասխան գույքով, սանհանգույցներով, բուժկետերով, խոհանոցային տեխնիկայով: Մանկապարտեզները հիմնանորոգելիս հատուկ ուշադրություն ենք դարձրել էներգաարդյունավետ և էներգախնայող տարրերի ներդրմանը:
- Հիմնանորոգվող մանկապարտեզների շենքային պայմանների բարելավմանը զուգահեռ՝ բարեկարգել ենք նաև բակային տարածքները:
- Համայնքային ենթակայության բոլոր մանկապարտեզները համալրել ենք զարգացնող խաղերով, դիդակտիկ պարագաներով, գրքերով:
- Երևան համայնքի ավագանու կողմից ընդունված նախադեպային որոշման արդյունքում համայնքին ենք վերադարձրել մեկ մասնավորեցված մանկապարտեզ:
- «Մանկապարտեզ» էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործմամբ հնարավորություն ենք ընձեռել ծանոթանալու նախընտրելի մանկապարտեզի հերթագրումների առկա տվյալներին՝ ապահովելով երեխայի ընդունելության կանխատեսման նվազագույն հնարավորությունը, ինչպես նաև գործընթացի թափանցիկությունը՝ էականորեն նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:
- Յուրաքանչյուր ուսումնական տարվա մեկնարկին իրականացնում ենք մասնագիտական վերլուծություն, իսկ խմբեր ձևավորելիս պահպանում ենք հետևյալ սկզբունքները՝
    - հավասարակշռված մոտեցման ցուցաբերում՝ բոլոր տարիքային խմբերի ներգրավվածությունն ապահովելու տեսանկյունից,
    - 5-6 տարեկան բոլոր հերթագրված երեխաների՝ նախադպրոցական կրթության համակարգում ընդգրկվածության ապահովում,
    - վերանորոգման պատճառով հաստատության գործունեության դադարի պարագայում աշխատող ծնողների՝ տվյալ մանկապարտեզի սան հանդիսացող երեխաների առաջնահերթ ընդգրկում հարակից մանկապարտեզներ:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

- 2024թ. հիմնանորոգելու ենք թվով **33** մանկապարտեզ, 2025 թ.-ին՝ ևս **35-ը,** ինչի արդյունքում նախադպրոցական տարիքի ոչ մի երեխա զրկված չի լինելու մանկապարտեզ հաճախելու հնարավորությունից, և այսպիսով **2026 թվականին Երևանի մանկապարտեզներից ոչ մեկն այլևս հիմնանորոգման կարիք չի ունենա:**

- Մինչև 2026թ. կառուցելու ենք **4 նոր մանկապարտեզ** Արաբկիր, Կենտրոն, Ավան և Շենգավիթ վարչական շրջաններում:
- Մի շարք մանկապարտեզներում ձևավորելու ենք հավելյալ մսուրային խմբեր՝ նկատի ունենալով առկա պահանջարկը և այդպիսով հնարավորություն տալով ծնողներին շուտ վերադառնալու աշխատանքի, ապահովելով երեխաների սոցիալիզացիան ավելի վաղ տարիքից:
- Ավելացնելու ենք երևանյան մի շարք դպրոցներում գործող նախակրթարանների թիվը՝ 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթությունն այլընտրանքային եղանակով կազմակերպելու նպատակով:
- Մինչև 2028թ. բարեկարգելու ենք Երևանի **բոլոր մանկապարտեզների բակերը՝** ներառելով խաղահրապարակների կահավորումը:
- Իրավապահ մարմինների հետ շարունակելու ենք ուսումնասիրել մանկապարտեզների ամբողջական կամ մասնակի մասնավորեցման իրավական հիմքերը, դրանց բացակայության պարագայում վերադարձնելու ենք համայնքին պատկանող գույքը:
- Հայաստանի Հանրապետության կառավարության հետ քննարկելու ենք Երևանի ենթակայության դպրոցներին անհատույց օգտագործման իրավունքով տրված շենքերի պահպանման, վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար պատվիրակված լիազորությունների շրջանակում համայնքին ֆինանսավորում հատկացնելու հարցը:
- Հանրակրթական դպրոցներում և մանկապարտեզներում բարելավելու ենք ուսումնական միջավայրը՝ ներդրված և գործարկվող համընդհանուր ներառական կրթության շրջանակում՝ բոլոր երեխաների համար ապահովելով հավասար հնարավորություններ և կրթության մատչելիություն:
- Համայնքային մանկապարտեզներում ընդլայնելու ենք երկարօրյա ծառայությունը, ինչն աշխատող ծնողներին հնարավորություն կընձեռի երեխաների խնամքը կազմակերպելու երկարացված ժամային գրաֆիկով:

ՀԱՍԱՆԵԼԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Պոլիկլինիկաներն անմխիթար վիճակում են, անվերջանալի հերթեր են, պետական պատվերով դեղեր չկան, շտապ օգնությունն ուշանում է:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

- Մինչև 2023թ. ավարտը շահագործման ենք հանձնելու ամբողջությամբ հիմնանորոգված և վերազինված **թվով 5 պոլիկլինիկա**:
- Համայնքային ենթակայության բոլոր պոլիկլինիկաները վերազինել ենք ժամանակակից թվային նոր սարքավորումներով:
- Մեկնարկել և մինչև տարեվերջ ավարտին ենք հասցնելու էլեկտրոնային հերթագրման համակարգի ներդնումը պոլիկլինիկաներում:
- Իրականացնում ենք պոլիկլինիկաներում ընթացող բոլոր պրոցեսների թվայնացում, ընթացիկ տարվա ավարտին կունենանք «Մեկ պատուհանի» սկզբունքով աշխատող

պոլիկլինիկաներ, ինչի արդյունքում կկրճատվի քաղաքացիների կրկնակի այցը պոլիկլինիկա:
- Մեր կողմից իրականացված աշխատանքների արդյունքում 2022 թվականից պոլիկլինիկաներում պետական պատվերով դեղորայքի տրամադրումը կատարվում է ամբողջ ծավալով և առանց խափանումների:
- Ընդլայնել և ամբողջությամբ թարմացրել ենք շտապօգնության ավտոպարկը գերժամանակակից մեքենաներով, որի արդյունքում կանչին արձագանքելու միջին տևողությունն էապես նվազել է:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

- Մինչև 2026թ. հիմնանորոգելու ենք Երևանի բոլոր պոլիկլինիկաները:
- **Մինչև 2025 թվականը հիմնանորոգելու և շահագործման ենք հանձնելու ևս 7 պոլիկլինիկա:**
- Շարունակաբար **վերազինելու ենք բոլոր** բժշկական հաստատությունները ժամանակակից թվային սարքավորումներով:
- Շարունակելու ենք շտապօգնություն ծառայության արդիականացումը, թվայնացնելու ենք կանչերի ծառայությունը, իսկ շտապօգնության ավտոպարկը համալրելու ենք նոր մեքենաներով:
- Առողջապահական գրագիտության բարձրացման և կարողությունների զարգացման նպատակով դպրոցներում և մանկապարտեզներում իրականացնելու ենք համապատասխան մասնագետների վերապատրաստում, ուսուցիչ-կենսաբանների և բուժքույրերի կրթում:
- Երևան քաղաքում կառուցելու ենք ժամանակակից բոլոր ստանդարտներին համապատասխանող խոշոր բազմապրոֆիլ բժշկական կենտրոն:

ՍՊՈՐՏԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆԱՑՈՒՄ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Մարզվելու պայմաններ չկան, հաշմանդամություն ունեցող անձանց համար սպորտը հասանելի չէ:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

- Հիմնանորոգել և շահագործման ենք հանձնել «Թենիսի և բադմինտոնի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցը», ինչի արդյունքում շուրջ 800 երեխա տարբեր սպորտաձևերով զբաղվելու անվճար հնարավորություն է ստացել՝ մինի ֆուտբոլ, մեծ և փոքր թենիս, վոլեյբոլ, բադմինտոն և այլն:
- Ամբողջությամբ հիմնանորոգել ենք Շենգավիթ վարչական շրջանում գտնվող համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցը, որտեղ անվճար մարզվում են 1000-ից ավելի երեխաներ: Այն իր մեջ ներառում է երկու թենիսի կորտ, ֆուտբոլի և բասկետբոլի համար նախատեսված մարզասրահներ, նետաձգարան, հրաձգարան և այլն:

- Ավիամոդելավորման տեսակների զարգացման, այդ թվում՝ որպես մարզաձև, կազմակերպման անհրաժեշտության նպատակով հիմնադրել ենք «Երևանի ավիամոդելավորման դպրոց» ՀՈԱԿ-ը:
- Բոլոր վարչական շրջանների բակերում կառուցել ենք 12 մեծ և 12 փոքր «work out» ոճի մարզահրապարակներ:
- Համայնք-մասնավոր համագործակցության շրջանակում Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածում կառուցել ենք Սքեյթ-պարկ հանգստի գոտի:
- 2022 թվականից սկսած մի շարք օլիմպիական մարզաձևերով մեկնարկել ենք «Երևան օփեն» միջազգային մրցաշարերի կազմակերպումն ու անցկացումը:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

- Երևանի Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցում կառուցելու ենք նոր լողավազան:
- Կառուցելու ենք միջազգային ստանդարտներին համապատասխանող Ալբերտ Ազարյանի անվան նոր մանկապատանեկան մարզադպրոց:
- Բոլոր վարչական շրջաններում ունենալու ենք առնվազն մեկ հիմնանորոգված կամ նոր կառուցված մարզադպրոց, որոնք հագեցած կլինեն ժամանակակից սպորտային սարքավորումներով:
- Ամենամյա կտրվածքով շարունակելու ենք կազմակերպել «Երևան օփեն» միջազգային մրցաշարեր մի շարք մարզաձևերով:
- Գործարանային մետրոյի կայարանի հարևանությամբ կառուցելու ենք Երևան քաղաքի մենապայքարային մարզաձևերի բարձրագույն վարպետության մարզադպրոցը, ինչը հնարավորություն կտա զարգացնելու և ամրապնդելու մեր հավաքականների հաջողությունները:

ԵՐԵՎԱՆԸ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Երևանում մշակութային կյանքն անհետաքրքիր է:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

- Համայնքապատկան գրադարանների գրքային ֆոնդը համալրել ենք 730 անուն շուրջ 20000 նոր գրքերով, երաժշտական և արվեստի դպրոցները՝ 25 անուն շուրջ 600 նոր երաժշտական գործիքներով և պարագաներով:
- Հիմնանորոգել և վերազինել ենք Հր. Ղափլանյանի անվան և Մ. Մկրտչյանի անվան թատրոնները, Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցը:
- Կազմակերպել ենք մի շարք մշակութային միջոցառումներ, այդ թվում՝ Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակի կապակցությամբ 3 օր շարունակ Թումոյի այգում իրականացրել ենք նախադեպը չունեցող բացօթյա բալետային ներկայացումների ցուցադրություններ, որոնց ներկա է գտնվել ավելի քան 35000 հանդիսատես:

- Իրականացրել ենք մշակույթի ոլորտում մասնակցայնությանը նպաստող դրամաշնորհային ծրագրեր, այդ թվում՝ «Թատերական Երևան», «Երևանը կանանց համար», «Արամ Խաչատրյան-120», «Հայ կինո-100»:
- Իրականացրել ենք մեծամասշտաբ մշակութային ծրագրեր՝ նվիրված Ամանորին, Գիրք նվիրելու օրվան, Կանանց տոնին, Թատրոնի համաշխարհային օրվան, Ջազի միջազգային օրվան, Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան, Էրեբունի-Երևան տոնակատարությանը, կազմակերպել ենք Երևանի պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի համերգները, Երևանի երաժշտական և արվեստի դպրոցների մրցույթ-փառատոնը, Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ստուգատես-փառատոնը: Ընդհանուր առմամբ անցած 5 տարիների ընթացքում իրականացրել ենք շուրջ 200 բազմաժանր մշակութային միջոցառումներ և ծրագրեր:
- Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ կազմակերպվել են «Ոսկե ծիրան» Երևանի միջազգային կինոփառատոնը, «Արտավազդ» թատերական մրցանակաբաշխությունը, «Երևանի կարճամետրաժ ֆիլմերի», «Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական, Գրքի երևանյան, Երևանի միջազգային թատերական փառատոները, «Սիմֆոնիկ Երևան» և տասնյակ այլ բարձրարժեք նախաձեռնություններ:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

- Հիմնանորոգելու ենք Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնը և Մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոնը:
- Համայնքապատկան գրադարաններում ներդնելու ենք էլեկտրոնային կառավարման համակարգ:
- Շարունակաբար իրականացնելու ենք մշակութային ժառանգության պահպանմանը, ժամանակակից արվեստի զարգացմանը, մշակութային կազմակերպությունների և ինքնազբաղ արվեստագետների գործունեության աջակցմանն ուղղված ծրագրեր:
- Երևանի ենթակայության թանգարանների հավաքածուները հասանելի ենք դարձնելու վիրտուալ իրականության (VR) տեխնոլոգիայի միջոցով:
- Իրականացնելու ենք Միհեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոնի ստեղծագործական բարեփոխման և գեղարվեստական նոր մոդելի ներդրման ծրագիրը:
- Թանգարաններում իրականացնելու ենք ցուցանմուշների ցուցադրության այլընտրանքային ձևաչափերի կիրառմամբ բրայլյան և աուդիո ուղեցույցների ստեղծման աշխատանքներ՝ տեսողության խանգարումներ ունեցող այցելուների համար:
- Շարունակելու ենք մշակութային հաստատությունների հիմնանորոգման, վերանորոգման և արդիականացման ծրագրերի իրականացումը:

ՏՈՒՐԻԶՄԻ ԽԹԱՆՈՒՄ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Զբոսաշրջության զարգացմանն ուղղված քայլեր չեն ձեռնարկվում:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

- Զբոսաշրջիկներին Երևան քաղաքի մասին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու նպատակով «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում սկսել է գործել զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն:
- Զբոսաշրջիկների տեղաշարժը դյուրացնելու համար ներդրել ենք էկոավտոբուսներով հագեցված նոր երթուղի, որը «Զվարթնոց» միջազգային օդանավակայանը կապում է քաղաքի կենտրոնին:
- Արդիականացրել ենք «Երևան Սիթի Տուր» երթուղին:
- Զբոսաշրջիկներին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու նպատակով պատրաստել ենք Երևանի զբոսաշրջային քարտեզ՝ չորս լեզուներով:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

- Զբոսաշրջության զարգացման նպատակով իրականացնելու ենք Երևան քաղաքի բրենդի մշակումը, որն էլ ավելի ճանաչելի կդարձնի Երևանը համաշխարհային շուկայում:
- Ստեղծելու ենք քաղաքի բրենդավորման մշակումը գնահատող խորհուրդ, որը բաղկացած կլինի ոլորտը ներկայացնող անվանի մասնագետներից: Առաջարկվող նախագծերը կներկայացվեն նաև հանրային քննարկման:
- Պետական մարմինների հետ համագործակցությամբ ստեղծելու ենք զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն:
- Երևան քաղաքի արձանները և հուշարձանները, այգիները և հրապարակները շարունակելու ենք կահավորել եռալեզու տեղեկատվական վահանակներով՝ հագեցած QR կոդերով: Հուշարձանների մասին տեղեկատվությունը կմատուցվի նաև աուդիո տարբերակով՝ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար:
- Գործարկելու ենք երկու տարբեր երթուղիներ, ըստ որի՝ զբոսաշրջիկները հնարավորություն կունենան ծանոթանալու Երևան քաղաքի զբոսաշրջային վայրերի շուրջ 80 տոկոսին՝ ներառելով գրեթե բոլոր վարչական շրջանները: Աուդիոտուրը կմատուցվի մի շարք լեզուներով:
- Աջակցելու ենք Գրքի երևանյան միջազգային փառատոնի կազմակերպմանը՝ նպաստելով փառատոնի միջազգային հանրահռչակմանը:
- Ստեղծելու ենք Երևանի զբոսաշրջային քարտ, որը հնարավորություն կընձեռի զբոսաշրջիկներին այցելելու քաղաքի տարբեր թանգարաններ, զբոսաշրջային, ժամանցային վայրեր և օգտվելու քաղաքի տրանսպորտից:
- Առաջիկա տարիներին ավելացնելու ենք Երևան քաղաքում կազմակերպվող զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող միջոցառումների թիվը: Հայտարարելու ենք միջոցառումների իրականացման լավագույն գաղափարների ներկայացման մրցույթներ:
- Համայնքի և մասնավոր ոլորտի կապը ամրապնդելու, համագործակցությունը ակտիվացնելու, առկա խնդիրները լուծելու նպատակով աջակցելու ենք սպասարկման

ոլորտի տարբեր միությունների և ասոցիացիաների ստեղծմանը, որը հնարավորություն կտա համատեղ լուծելու զբոսաշրջությանն առնչվող խնդիրները, ինչպես նաև լավարկելու ոլորտի նկատմամբ վերահսկողությունը:

ԹԱՓԱՌՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԽՆԱՄՔ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Փողոցները լիքն են հիվանդ և կատաղած շներով, երեխաների համար վտանգավոր է դրսում խաղալը:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

- Մայրաքաղաքում թափառող կենդանիների խնդիրների կանոնակարգման նպատակով ստեղծել ենք «Թափառող կենդանիների վնասազերծման» կենտրոն ՀՈԱԿ-ը, որն իրականացնում է թափառող շների նախնական հետազոտություն, հիվանդ կենդանիների քնեցում, առողջ կենդանիների ստերջացում, պատվաստում և վերադարձ տարածք: 2023 թվականի կանոնադրական փոփոխություններից հետո ՀՈԱԿ-ը վերանվանվեց «Կենդանիների խնամքի» կենտրոն ՀՈԱԿ:
- Կառուցել և շահագործման ենք հանձնել կենտրոնի կլինիկական համալիրը, որն ունի առանձնացված վիրահատական բաժանմունք, նախավիրահատական և հետվիրահատական բլոկներ և կարանտին:
- Կառուցել ենք թափառող շների համար նախատեսված ժամանակավոր կացարան:
- Մեկնարկել ենք կատաղություն հիվանդության դեմ թափառող շների վերապատվաստման ծրագիրը:
- Երևանյան դպրոցներում մեկնարկել ենք կրթական արշավ՝ «Շների հետ վարվելու կանոնները» խորագրով:
- Վերջին չորս տարիների ընթացքում հետազոտվել, ստերջացվել, պատվաստվել է շուրջ 15.600 թափառող կենդանի:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

- Առաջիկա տարիներին կառուցելու ենք թափառող կենդանիների համար նախատեսված համայնքային կացարաններ, որոնցից մեկ մեծ կացարանը կկառուցվի Կենտրոն վարչական շրջանում, իսկ ևս 5-ը՝ այլ վարչական շրջաններում:
- Մեծացնելու ենք շների հետ վարվելու և ճիշտ վարքագիծ դրսևորելու վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված կրթական արշավի ծավալները:
- Նախաձեռնելու ենք օրենսդրական բարեփոխումներ ընտանի կենդանիների պահման և բազմացման հետ կապված հարցերի կանոնակարգման ուղղությամբ:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Երևանը վերածվել է մեծ շուկայի՝ բացօթյա ապօրինի առևտրի հետևանքով:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

- Ազգային ժողովի հաստատմանն ենք ներկայացրել օրենսդրական նախագիծ, որի ընդունմամբ հնարավորություն ունենք ոչ միայն տուգանելու ապօրինի առևտուր իրականացնողներին, այլ նաև առգրավելու ապօրինի առևտրի առարկա հանդիսացող ապրանքը, ինչն էականորեն բարձրացրել է պայքարի արդյունավետությունն ապօրինի բացօթյա առևտրի դեմ:
- Ձևավորել ենք հերթապահ խմբեր, որոնք 24/7 սկզբունքով պայքարում են բացօթյա ապօրինի առևտրի դեմ:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

Չնայած վերոգրյալին՝ Երևան քաղաքում դեռևս կարելի է հանդիպել ապօրինի առևտուր իրականացնող անձանց, որոնց գործունեության արդյունքում՝

- տուժում են նույն ոլորտում օրենքի շրջանակներում իրենց գործունեությունն իրականացնող տնտեսվարողները,
- առաջանում են առողջապահական ռիսկեր, քանի որ ապօրինի առևտուրը հաճախ իրականացվում է սանիտարական կանոնների խախտմամբ,
- տուժում է մայրաքաղաքի տեսքը,
- խոչընդոտվում է երևանցիների ազատ տեղաշարժը:

Նշված խնդիրները լուծելու նպատակով՝

- առավել մեծ ռեսուրսներ ենք տրամադրելու՝ ուղղված ապօրինի առևտրի դեմ պայքարին,
- քաղաքացիների շրջանում ապօրինի առևտրի բացասական կողմերի և հետևանքների մասին պատմող լայն իրազեկման աշխատանքներ ենք իրականացնելու:

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Առևտրի ոլորտի թույլտվությունների տրամադրումը դյուրին չէ, և առկա են կոռուպցիոն ռիսկեր

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

Վերոնշյալ խնդիրները լուծելու նպատակով թվայնացրել ենք հետևյալ թույլտվությունների ստացման գործընթացները՝

- Հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն,

- Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվություն,
- Ծխախոտի վաճառքի թույլտվություն:

Մշակել և ընդունել ենք ամառային և ձմեռային սեզոններին բացօթյա հատվածներում սրճարանային գործունեության կազմակերպման կանոնները, որոնցով նախատեսել ենք.

- Հետիոտնի անցման համար նվազագույն տարածք պահպանելու պահանջ,
- Կահավորման պահանջներ, որոնք ուղղված են Երևանի փողոցների և շենքերի արտաքին տեսքի պահպանմանը:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

- Հաշվի առնելով, որ ոլորտային մի շարք հարցեր առհասարակ կարգավորված չեն, ուստի առաջնահերթության կարգով մշակելու և ընդունելու ենք համապատասխան կարգավորումները և թվայնացնելու ենք դրանցից բխող թույլտվությունների հայցման և տրման գործընթացները:
- Շարունակելու ենք արդեն իսկ կանոնակարգված գործընթացների թվայնացումը, ինչը կհանգեցնի տնտեսվարողների աշխատանքի հարմարության և արդյունավետության, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցման և թափանցիկության բարձրացմանը:

ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Երևանի արտաքին տեսքը և ճարտարապետությունը աղավաղվում է բազմաթիվ գովազդների և ցուցանակների պատճառով:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

- 2023 թվականին ընդունել ենք Երևան քաղաքում արտաքին գովազդ տեղադրելու համապարփակ համայնքային կանոնները, որոնք, հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա, նախատեսում են կանոնակարգումներ՝ ուղղված Երևան քաղաքի շենքերի, փողոցների, մայթերի տեսքը աղավաղող գովազդից մաքրելուն: Նշված կանոններով սահմանում են թույլատրելի գովազդի չափորոշիչները, որոնց պահպանումը թույլ կտա մի կողմից՝ չխաթարել Երևան քաղաքի արտաքին տեսքը, իսկ մյուս կողմից՝ տեղադրել տնտեսական գործունեությունից անբաժան գովազդը:
- Քննարկվող կանոնների կիրառման արդյունքում Երևան քաղաքի հատկապես նեղ փողոցների համար անհարիր մեծ գովազդային վահանակներից մաքրել ենք Բաղրամյան պողոտայի մայթերը, ինչպես նաև նույն պողոտայի հենասյուները:
- Նշված կանոնները տնտեսվարողների համար առավել հասկանալի դարձնելու նպատակով մշակել և հրապարակել ենք կանոնների բացատրական ուղեցույցը, որը կպարզեցնի նաև գովազդի տեղադրման թույլտվությունների ստացման գործընթացը:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

- Իրականացնելու ենք մեծածավալ աշխատանքներ՝ ուղղված Երևանի աղճատված արտաքին տեսքի վերականգնմանը՝ վերացնելով «տեսողական աղբը»:
- Առաջիկայում հետևողական և համաչափ քայլերով տնտեսվարողների հետ անցնելու ենք ընդունված կանոնները կյանքի կոչելու ճանապարհը, որի արդյունքում Երևանը բնակիչներին և քաղաքի հյուրերին կներկայանա իր շքեղ ճարտարապետությամբ և պատմությամբ:

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Քաղաքում մութ է, օդում կախված մալուխները տգեղ են:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

- 2019 թվականից սկսած տեղադրել ենք շուրջ 30.000 էներգախնայող ԼԵԴ լուսատուներ:
- 2023թ. օգոստոսի 1-ից գիշերային լուսավորության ռեժիմը ավելացրել ենք 1 ժամով՝ ամռանը հասցնելով մինչև 02:00-ի, իսկ ձմռանը՝ 01:00-ի:
- Երևան քաղաքի վերգետնյա կապի և էլեկտրահաղորդման ցանցի ստորգետնյա կոմունիկացիաների ստեղծման ծրագրի առաջին փուլով Ամիրյան փողոցի մալուխային ցանցը անցկացրել ենք գետնի տակ, իսկ մինչև տարեվերջ ավարտին ենք հասցնելու նաև Մյասնիկյան և Աճառյան փողոցների մալուխային ցանցերի ստորգետնյա անցկացման գործընթացը:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

- Հին նատրիումային տիպի լուսատուները ամբողջությամբ փոխարինելու ենք նոր ԼԵԴ լուսատուներով՝ ապահովելով ամբողջ քաղաքի էներգաարդյունավետ լուսավորությունը գիշերային ժամերին:
- Կառուցելու ենք արևային կայաններ, որոնք հնարավորություն կտան օգտագործելու արևային էներգիան քաղաքի լուսավորության համար:
- Ստեղծելու ենք թվային կառավարման համակարգ, որը կնվազեցնի էլեկտրաէներգիայի ծախսը և վթարների քանակը:
- Շարունակելու ենք փողոցներում առկա վերգետնյա մալուխների՝ ստորգետնյա անցկացման աշխատանքները:
- Երևան քաղաքում նոր ճանապարհներ կառուցելիս մալուխներն այսուհետ անցկացնելու ենք միայն ստորգետնյա ճանապարհով:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Քաղաքում անկանոն շինարարություն է, մշտապես խցանումներ են, շրջանցող ճանապարհներ չկան:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

- Մեկնարկել ենք Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի մշակումը, որի ընդունումը թույլ կտա կանոնակարգել և առավել թափանցիկ դարձնել թույլատվական փաստաթղթերի ստացման և կառուցապատման իրականացման գործընթացը: Քաղաքը պետք է ունենա զարգացման հստակ քաղաքականություն, որն ամրագրված կլինի հիմնարար փաստաթղթում: Գլխավոր հատակագծի մշակման աշխատանքներում ներգրավված են լինելու Ֆրանսիայի Իլ դը Ֆրանս նահանգի քաղաքաշինական գործակալության լավագույն մասնագետները, ինչպես նաև Ասիական զարգացման բանկի կողմից առաջարկվող փորձագետները: Գլխավոր հատակագիծը, որպես հիմնական առանձնահատկություն, լինելու է թվայնացված:
- 2023թ. երկրորդ եռամսյակում ընթացք ենք տվել և սպառիչ պատասխանել ենք Ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունում կուտակված ավելի քան 5000 գործերին: Այս պահին վերոնշյալ վարչության ժամկետանց կամ չպատասխանված գործերի և դիմումների քանակը կազմում է 0:
- Սույն թվականի հունիսին, հաշվի առնելով, որ Երևան քաղաքը գտնվում է ակտիվ կառուցապատման փուլում, շինարարական թույլտվությունների քննարկման նպատակով Երևանի քաղաքապետի որոշմամբ ձևավորվել է բարձր որակավորում ունեցող հինգ ճարտարապետներից բաղկացած խորհուրդ: Խորհրդի նպատակն է կանխել Երևան քաղաքի ճարտարապետական ուրվագիծը աղավաղող նախագծերի հաստատումը և նպաստել ճարտարապետական տեսանկյունից արժեքավոր նախագծերի կյանքի կոչմանը: Խորհուրդն իր որոշումներում գործում է անկախ, ազատ է բյուրոկրատական գործընթացներից, որի արդյունքում ստեղծվել է անաչառ և անկողմնակալ որոշումների կայացման հարթակ:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

- Ավարտին ենք հասցնելու Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի մշակման աշխատանքները: Փաստաթուղթը սահմանելու է քաղաքի զարգացման հիմնական քաղաքականությունը և հիմք է հանդիսանալու քաղաքաշինական գործառույթների արդյունավետության բարձրացման և թվայնացման համար:
- Շարունակելու ենք մեր կողմից որդեգրված քաղաքականությունը, այն է՝ քաղաքացու դիմումներին սահմանված ժամկետներում պատասխանելը առաջնահերթություն է: Մինչև 2023թ. վերջ զրոյացվելու են նաև բազմաբնակարան շենքերի շինթույլտվությունների գծով ժամկետանց բոլոր դիմումները:
- Բազմաբնակարան շենքերի շինթույլտվությունների քննարկման ժամանակ առաջնային են լինելու սոցիալական ենթակառուցվածքների ձևավորման հարցերը: Մենք ստեղծելու

ենք նոր շինություններ, որոնք ունենալու են դպրոցների, մանկապարտեզների, բակային և կանաչապատ տարածքների անհրաժեշտ հասանելիություն:
- 2024թ. մշակելու, հաստատելու և կիրառելու ենք կառուցապատման նախագծեր, որոնք հանդիսանալու են մայրաքաղաքի թաղամասային զարգացման և կառուցապատման մանրամասն և սխեմատիկ փաստաթղթերը:
- 2023թ. չորրորդ եռամսյակում ավարտին ենք հասցնելու քաղաքաշինական համալիր թվայնացված համակարգի ներդնումը՝ GIS (աշխարհագրական տեղեկատվական համակարգ): GIS համակարգը ինտեգրված գործելու է Կադաստրի կոմիտեի քարտեզագրական տվյալների հետ: Համակարգը հնարավորություն է տալու թվայնացնելու քաղաքային միջավայրի բոլոր շերտերը՝ դրանք հասանելի դարձնելով և՛ մասնագետներին, և՛ հանրությանը:

ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Քաղաքում մշտապես խցանումներ են, շրջանցող ճանապարհներ չկան:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

- Կառուցել ենք Արգավանդ-Շիրակ 2.7 կմ ճանապարհը, որի միջին լայնությունը 26 մ է: Այն ներառում է նաև Հրազդան գետի վրա կառուցված 252 մ երկարություն ունեցող նոր մետաղական կամուրջը, որը հանդիսանում է Երևանի 5-րդ խոշոր կամուրջը, ինչպես նաև մեկ էստակադ՝ Իսակով-Բաբաջանյան փողոցների հատման ճանապարհային հանգույցում: Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածը մաս է հանդիսանում Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի, ինչպես նաև կապ է հաստատում Երևանի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների միջև՝ էապես կրճատելով երթևեկության ժամանակը երկու վարչական շրջանների միջև:
- Մեկնարկել ենք և մինչև տարեվերջ ավարտելու ենք Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհի կառուցումը, որի ընդհանուր երկարությունը կազմում է 9.4 կմ, միջին լայնությունը՝ 24մ: Ճանապարհահատվածը ներառում է 7 էստակադների, ինչպես նաև 1 ստորգետնյա և 1 վերգետնյա հետիոտնային անցումների կառուցում: Այս ճանապարհահատվածը կապ է հաստատում Երևանի Մալաթիա-Սեբաստիա և Աջափնյակ վարչական շրջանների միջև:
- Կառուցվել է Մամիկոնյանց և Արամ Խաչատրյան փողոցներն իրար միացնող ճանապարհահատվածն իր ինժեներական ենթակառուցվածքներով, որի արդյունքում երթևեկությունն էականորեն բեռնաթափվել է:
- 2023 թվականին առաջին անգամ մեկնարկեցինք բոլոր վարչական շրջաններում՝ ընդհանուր 210.734,68 քմ ծավալով փողոցների միջին նորոգման աշխատանքների իրականացումը:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

- Մինչև 2025թ. կառուցելու ենք Մ. Մելքոնյան-Իսակով-Արշակունյաց պողոտաները իրար կապող շուրջ 2 կմ նոր ճանապարհը:

- Թբիլիսյան խճուղին միացնելու ենք Եղվարդի խճուղուն՝ ապահովելով անընդհատ երթևեկություն Հյուսիս-Հարավ մայրուղուց դեպի Երևան-Սևան Մ4 միջպետական նշանակության ճանապարհը:
- 2025թ. կառուցելու ենք Արշակունյաց-Գրիգոր Լուսավորիչ ճանապարհային նոր հանգույցը:
- 2024-2025թթ. կառուցելու ենք Նոր Նորք վարչական շրջանը Մյասնիկյան պողոտային կապող շուրջ 1.5 կմ ճանապարհ և էստակադ՝ էականորեն նվազեցնելով Մյասնիկյան փողոցի խցանումները:
- Մինչև 2026թ. կառուցելու ենք Երևան քաղաքը «Զվարթնոց» միջազգային օդանավակայանին կապող այլընտրանքային ճանապարհ, որը օդանավակայանը կկապի Բաբաջանյան-Աշտարակ հատվածին:
- Կառուցելու ենք Երևանի արևելյան շրջանցիկ ճանապարհը, որը Մասիսի տրանսպորտային հանգույցը կկապի Վերին Պտղնու տրանսպորտային հանգույցին՝ շրջանցելով Երևանը արևելյան կողմից: Աշխատանքներն արդեն մեկնարկել ենք, առաջին հատվածի կառուցումը կավարտենք 2024թ., երկրորդ հատվածը՝ 2025թ.:
- Մինչև 2024թ. ավարտին ենք հասցնելու Նորք-Մարաշը Սարալանջ փողոցին կապող շուրջ 1.5 կմ ճանապարհի կառուցումը՝ էականորեն նվազեցնելով Արմենակյան և հարակից փողոցների խցանումները:
- Մինչև 2025-2026 թթ. կառուցելու ենք Ուլնեցի-Ռուբինյանց ավտոճանապարհի վերջնամասից մինչև Աճառյան փողոց երկաթգծի ծրագրով 3.7 կմ ավտոճանապարհը, որը կնվազեցի Քանաքեռ-Զեյթուն և Նոր Նորք վարչական շրջանները կապող ճանապարհահատվածի ծանրաբեռնվածությունը:
- Մինչև 2025թ. կառուցելու ենք Դավթաշեն վարչական շրջանի Տիգրան Պետրոսյան փողոցին զուգահեռ ճանապարհահատվածը, որը Աղաբաբյան փողոցը կշարունակի երկրորդ թաղամասի հյուսիսային հատվածով՝ ավարտուն տեսքի բերելով երկրորդ թաղամասի պարագծային երթևեկությունը:
- Մինչև 2025թ. կառուցելու ենք Դավթաշենի կամրջից, Սասնա Ծռեր փողոցի՝ դեպի հյուսիս շարունակությունը, այն կապելով Աղաբաբյան փողոցին՝ ամբողջացնելով Դավթաշեն թաղամասի ճանապարհատրանսպորտային ցանցը:
- 2027թ. շահագործման կհանձնվի «Հայրենիք» կինոթատրոնի ճանապարհային հանգույցը՝ ապահովելով անընդհատ երթևեկություն Հյուսիս-Հարավ մայրուղի-Սևան ուղղությամբ, ինչպես նաև կբարելավվի Շենգավիթ և Էրեբունի վարչական շրջանների տրանսպորտային կապը:
- Նախագծելու ենք նոր կամուրջ Հրազդանի կիրճի վրայով, որը կկապի Թբիլիսյան և Եղվարդի խճուղիները: Նոր կամուրջը զգալիորեն կթեթևացնի Արաբկիր և Դավթաշեն վարչական շրջանների երթևեկության ծանրաբեռնվածությունը:
- Առաջիկա 5 տարիների ընթացքում տարեկան կտրվածքով իրականացնելու ենք 70-90 կմ միջին նորոգման աշխատանքներ՝ այդպիսով նորոգելով Երևանի ամբողջ 271 կմ ճանապարհացանցը:

ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍԵՐ

ԱՍՈՒՄ ԵՔ՝

Ունենք մեծ ծավալի խարխուլ և հնամաշ բնակֆոնդ:

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ

- Մեկնարկել ենք 2000-ականներից քննարկվող Ֆիրդուս և Հին Երևան թաղամասերի վերակառուցման ծրագրի գործնական և շինարարական փուլը: Այժմ իրականացնում ենք լայնածավալ շինարարական աշխատանքներ, որի ավարտին Երևանի սրտում կունենանք ամբողջությամբ վերակառուցված Ֆիրդուս և Հին Երևան թաղամասեր՝ միասնական քաղաքաշինական լուծումներով:
- Կարևորելով քաղաքացիների անվտանգությունը՝ մշակել և արդեն իսկ իրականացնում ենք Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան 10 և 17 վթարային շենքերի վերաբնակեցման ծրագիրը, որով նախատեսվում է բնակիչներին տրամադրել նոր բնակարաններ՝ վթարային շենքերի տեղում կառուցվող նոր բազմաբնակարան շենքերում: Հատկանշական է, որ բնակիչների առջև նոր բնակարանների տրամադրման պարտավորությունը ստանձնում է հենց Երևանի քաղաքապետարանը՝ զերծ պահելով բնակչին կառուցապատողի կողմից հնարավոր օբյեկտիվ կամ սուբյեկտիվ ռիսկեր ստեղծելուց:

ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ

- Վերսկսելու և մինչև 2027թ. ավարտին ենք հասցնելու Երևանի ամենահին թաղամասի՝ Կոնդի վերափոխման գործընթացը: Պահպանելու ենք թաղամասի պատմական դիմագիծը և բոլոր մշակութային հուշարձանները, բացառելու ենք բազմահարկերի կառուցումը՝ ապահովելով բնակիչների իրավունքները հողերի օտարման և վերաբնակեցման գործընթացում: Զուգահեռ հայտարարելու ենք վերջնական հայեցակարգի և էսքիզ նախագծի բաց մրցույթ, որից հետո մեկնարկելու ենք թաղամասի վերափոխման գործընթացը:
- Մինչև 2028թ. ավարտին ենք հասցնելու Երևանի կենտրոնում գտնվող Նորագյուղ թաղամասի զարգացման ծրագիրը: Ապահովելու ենք բնակիչների իրավունքները հողերի օտարման և վերաբնակեցման գործընթացում:
- Մինչև 2024թ. ամբողջությամբ փոխելու ենք Հին Նորք թաղամասի ենթակառուցվածքները և տարածքի կոլորիտին համապատասխան սալիկապատելու ենք ամբողջ թաղամասի փողոցները (10.000 քմ): Մշակելու և եռամյա ժամկետում իրականացնելու ենք Հին Նորքի պահպանման և զարգացման, մառանային տնտեսություններին օժանդակելու և թաղամասը որպես Երևանի տուրիստական կենտրոններից մեկը դարձնելուն ուղղված զարգացման ծրագիր:
- Երևանի Կասկադ համալիրի չկառուցապատված վերնամասում՝ ավելի քան 8 հա տարածքում, ավարտին ենք հասցնելու Կասկադ համալիրի կառուցումը: Կառուցելու ենք մշակութային նշանակության կառույցներ, հանրային գոտիներ, հետիոտն ճեմուղի դեպի մատենադարան և ուսանողական հատված:
- Շարունակելու ենք վթարային շենքերի բնակիչների խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակումն ու իրականացումը: ՀՀ կառավարության և մասնավորապես՝

Քաղաքաշինության կոմիտեի հետ այս ուղղությամբ մշակելու ենք համատեղ գործողությունների ծրագիր՝ անհրաժեշտության դեպքում նախաձեռնելով նաև ռենովացիայի մասին նոր օրենքի մշակումը և ընդունումը: